ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-16-3» ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07.04.2016թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Էդ. Շախկյանը

Անդամներ՝ աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Աբրահամյանը

աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Բաբուջյանը

աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյանը

աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ՝ Ա. Ջուլհակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

«ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-16-3» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության շենքում, ք. Երևան, կառավարական տուն, մասն.3 հասցեում, 7-րդ հարկ (հաշվապահական հաշվառման բաժնում), 2016 թվականի ապրիլի 07-ին ժամը 11:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

N/N	Մասնակցի անվանումը	Կազմակերպության հասցեն
1	«Տրինիդատ» ՍՊԸ	Ք.Երևան, Զաքյան 6/36 trinidattour@gmail.com

3. **Տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Բոլոր մասնակիցներիի կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

4.1 «ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-16-3» ծածկագրով մրցույթին հրավերով սահմանված «Տրինիդատ» ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել էր գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /հավելված 1/, որակավորման չափանիշների վերաբերյալ սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը /հավելվածներ 3.2, 3.3, 3.5 և 3.6/, գնի առաջարկ /հավելված 4/, հայտի ապահովում /հավելված 9/ և վճարման պահանջագիր: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից և համապատասխանում են հրավերով սահմանված կարգի պահանջներին:

5. **Մասնակիցների առաջարկած գները.**

Ծառայության անվանումը	Գնի առաջարկները (ՀՀ դրամ)		
	«Տրինիդատ» ՍՊԸ		
	գինը	ԱԱՀ	գինը
Ավիասպասարկման ծառայություններ /չափաբաժին 1/	798000	-	798000

Նիստի ընթացքում հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին «ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-16-3» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի հայտը և գնահատելով դրանք որոշվեց՝

1. Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ 1-ին տեղ հաղթող մասնակից ճանաչել «Տրինիդատ» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել նիստի արդյունքները և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Տրինիդատ» ՍՊԸ-ին:
3. Անգործության ժամկետ չի սահմանվում, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի է) կետի:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Էդ. Շախկյան

Անդամներ՝

Աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Աբրահամյան

աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Բաբուջյան

աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան

աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ՝ Ա. Ջուլհակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ գնումների համակարգող՝ Լ. Ադոնց